

Գ.Ն. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ, Ի.Ա. ՀՈՎԱՍԵՓՅԱՆ

ԲԱՆԿԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲԱԶԵԼՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Դիտարկվել են բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեի վարկային ռիսկի գնահատման միջազգային մոտեցումների զարգացումները: Առանձնացվել են վարկային ռիսկի արդի հիմնախնդիրները, և ներկայացվել դրանց հաղթահարման հեռանկարները:

Որոշվել են նաև Հայաստանի համար ընթացիկ իրավիճակը և կենտրոնական բանկի մոտեցումները այդ գործընթացներում:

Առանցքային բաներ. վարկային ռիսկ, կապիտալի համարժեքություն, կապիտալի հակացիկլիկ շեմ:

Որպես հիմնարար սկզբունք, որը կոչված է ապահովելու ֆինանսական համակարգի կայունությունը, XX դարի երկրորդ կեսից սկսեց հանդես գալ դրանում ռիսկերի պարտադիր կարգավորման սկզբունքը և, առաջին հերթին, վարկային ռիսկի՝ որպես ֆինանսական գործունեության առավել նշանակալի ռիսկի տեսակի:


Բազելյան համաձայնագրերով ստանդարտացվում և ընդհանրացվում է բանկային գործի ժամանակակից լավագույն պրակտիկան: ՀՀ բանկային համակարգի շարունակական զարգացման համար ՀՀ կենտրոնական բանկը 2001թ. հրապարակել է բանկային ռիսկի կառավարման մեթոդական ուղեցույց [15], որը նախատեսված էր՝ աջակցելու բանկերին՝ վարկային ռիսկի կառավարման քաղաքականության, մեթոդների, ընթացակարգերի և տեղեկատվական համակարգերի մշակման գործում:

Բանկի կապիտալի համարժեքության պահանջը 1988թ. հանդիսացավ ոլորտում ռիսկերի կարգավորման և ֆինանսական համակարգի կայունության ապահովման նկատմամբ Բազելյան կոմիտեի հիմնաքարը: Բանկի ֆինանսական կայունությունը որոշվում է վարկային ռիսկերը ծածկելու համար նրա կապիտալի համարժեքությամբ: Համարժեքության մակարդակը որոշվում է, այսպես կոչված, «Կուկի հարաբերությամբ» (Cook relation) [1] և հաստատված է 8% մակարդակում: Վարկային ռիսկի որոշման համար առաջարկվում է հաշվել ակտիվների և բանկի նկատմամբ տարբեր պարտավորությունների հանրագումարը:

Հաջորդիվ՝ 1999թ., Բազելյան կոմիտեի կողմից ընդունվեցին «Վարկային ռիսկի կառավարման սկզբունքները» (Principals for the Management of Credit Risk, 1999), իսկ ավելի ուշ՝ նաև «Կապիտալի ստանդարտների և կապիտալի չափման միջազգային կոնվերգենցիայի» ստանդարտները (International convergence of

Capital Measurement and Capital Standards, A Revised Framework, 2004), որոնք էլ ստացան ընդհանուր՝ Բազել II կրճատ անվանումը:

Այս նոր ստանդարտը ներառում էր արդեն երեք հիմնական բաղադրիչ կամ հիմունք (pillars), որոնք պետք է ապահովեին բանկային համակարգի նկատմամբ կայունության ցուցանիշները (նկ. 1):



Նկ. 1. Բազել II-ի հիմնական բաղադրիչները [2]

Փաստաթղթում առավելագույն ուշադրությունը դարձված է առաջին բաղադրիչին: Երկրորդ և երրորդ բաղադրիչները կրում են դեկլարատիվ բնույթ:

Ընդհանրացնելով Բազել II-ի կողմից առաջարկվող մոտեցումները, կարելի է նկատել, որ առաջին անգամ բանկերին դրանով տրամադրվել է բավարար ազատություն՝ վարկային ռիսկի հաշվարկի երկու հիմնական մոտեցումների միջև՝ արտաքին վարկանշման գնահատականների կիրառմամբ կամ իրենց ներքին վարկանշման համակարգերի հիման վրա:

Համաձայն առաջին բաղադրիչի դրույթների՝ ճշգրտվել է նվազագույն համարժեք կապիտալի հաշվարկման կարգը՝ հաշվի առնելով ռիսկի երեք տեսակներ՝ վարկային, գործառնական և շուկայական: Կուկի հարաբերությունը այս դեպքում որոշվում է հետևյալ կերպ.

$$\frac{\text{Capital}}{\text{Credit risk} + \text{Market risk} + \text{Operation risk}} \geq 0.08:$$

Ստանդարտների վերանայման նկատելի անհրաժեշտությունը հանգեցրեց համաձայնագրի նոր տարբերակի ստեղծմանը 2010թ.՝ «Կարգավորման միջազգային մեխանիզմները բանկերի համար» [3] (International regulatory framework for banks, 2010) հետագա լրացումներով կամ Բազել III:

Բազել III-ը մշակվել է բանկային համակարգի ռիսկերի կառավարման, կարգավորման և վերահսկողության ամրապնդման նպատակով և գլխավորապես կոչված է ապահովելու այդ համակարգի ունակությունը՝ դիմակայելու ֆինանսական և տնտեսական տարաբնույթ շոկերին:

Վարկային ռիսկի կառավարման քաղաքականության առումով Բազել III-ն առաջարկում է մեծացնել կապիտալի համարժեքության նորմատիվը կոնտրազենտի վարկային ռիսկը ծածկելու համար, պայմանավորված ածանցյալ ֆինանսական գործիքներով կատարվող գործառնություններով, ռեպո համաձայնագրերով և արժեթղթերով կատարվող գործաքններով: Փոփոխություններն առնչվում են վարկային ռիսկի հաշվարկման մոդելի պարամետրերի նկատմամբ պահանջների խստացմանը և հենց մոդելի պայմանների բարդացմանը:

Բացի այդ, Բազել III-ում նախատեսված են հետևյալ փոփոխությունները.

1) «Առաջին մակարդակի սկզբնական կապիտալ» հասկացության ներդրում և առաջին մակարդակի կապիտալի նկատմամբ սահմանափակումների ուժեղացում:

2) Ճգնաժամային շրջանում հնարավոր կիրառման համար բուֆերային կապիտալի ձևավորում՝ «կոնսերվացիոն բուֆեր» և «հակացիկլիկ բուֆեր»:

3) Ռիսկով կշռված ակտիվներով բանկի բուֆերային կապիտալի ներառմամբ նվազագույն ընդհանուր կապիտալի նկատմամբ պահանջի ավելացում մինչև 10.5%, ըստ որում՝ բանկի նվազագույն պահանջվող կապիտալի մեծությամբ նախկինի պես կազմում է ակտիվների 8%-ը:

4) Իրացվելիության նվազագույն մակարդակի ներմուծում, ինչը պետք է ապահովի վճարունակության համարժեք մակարդակ ճգնաժամային իրավիճակներում:

5) Կապիտալի նվազագույն պահանջների հաշվարկի նկատմամբ ոչ ռիսկային մոտեցման ներմուծում՝ ֆինանսական լծակ, որպես կապիտալի և փոխառնված միջոցների հարաբերություն:

Հայաստանյան բանկերի համար կապիտալի հակացիկլիկ շեմի (կամ կապիտալի հակացիկլիկ բուֆեր (ԿՀԲ)) սահմանման գործընթացի հիմքում դրվում են միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվող սկզբունքները և մեթոդաբանությունը, այդ թվում՝ վաղ ահազանգման տարատեսակ քանակական ցուցա-

նիշները, դրանց համախմբման արդյունքում ստացված ամփոփ ցուցանիշների վերլուծությունը, ֆինանսական հատվածի զարգացումների վերաբերյալ փորձագիտական գնահատականները (ուղղորդված հայեցողականություն/guided discretion): Քանակական մոտեցումների և փորձագիտական գնահատականների միջոցով հնարավոր է լինում գնահատել վարկային ցիկլերի [4] (credit cycles) և դրանց փոփոխություններով պայմանավորված՝ համակարգային ռիսկերի զարգացումները:

ԿՀԲ-ն մակրոարուղենցիալ քաղաքականության գործիքներից մեկն է, որը թիրախավորում է վարկերի ավելցուկային աճը [5] (excessive credit growth)՝ մեղմելով ֆինանսական համակարգի կայունության վրա վերջինիս բացասական հետևանքները:

Մակրոարուղենցիալ քաղաքականություն իրականացնող մարմինը վարկերի ավելցուկային աճի հետևանքով, համակարգային ռիսկերի հնարավոր կուտակումը զսպելու նպատակով, վարկային ցիկլի վերելքի փուլում բարձրացնում է ԿՀԲ-ի պահանջը՝ ստեղծելով լրացուցիչ բուֆեր: Վարկային ցիկլի անկման փուլում այս բուֆերի պահանջը նվազեցվում է՝ դրանով իսկ մեղմելով ֆինանսական համակարգի մասնակիցների կողմից վարկավորման ծավալների մեծածավալ կրճատման անհրաժեշտությունը (դեկլերեջինգ) և վերջինիս անցանկալի հետևանքները ֆինանսական կայունության և տնտեսական աճի վրա:

Այսպիսով, ԿՀԲ-ի հիմնական նպատակը ֆինանսատնտեսական շոկերին ֆինանսական համակարգի դիմակայելու ունակության բարձրացումն ու տնտեսությանը վարկավորման տեսքով տրամադրվող ֆինանսական միջոցների հարթ ընթացքի ապահովումն են: Բազելյան կոմիտեի կողմից ԿՀԲ-ի վերաբերյալ որոշումների կայացման համար նախնական (եվակետային) գործոն է տնտեսությանը տրամադրված վարկեր/ՀՆԱ հարաբերակցության իր երկարաժամկետ տրենդից շեղման չափը (ճեղք) [4]:

Այնուամենայնիվ, Բազելյան կոմիտեի կողմից խորհուրդ է տրվում ԿՀԲ-ի վերաբերյալ որոշումներ կայացնելիս չհիմնվել բացառապես վարկեր/ՀՆԱ ցուցանիշի մեխանիկորեն կիրառման վրա, քանի որ այն վարկային ցիկլի զարգացումների վերաբերյալ հաճախ սխալ եզրահանգումների կարող է հանգեցնել: Մասնավորապես, սխալ եզրահանգումների պատճառ կարող են հանդիսանալ կարճ ժամանակային շարքերի օգտագործումը, ինչպես նաև զարգացող տնտեսություններին բնորոշ վարկավորման տարբերվող օրինաչափությունները և այլն: Բացի այդ, վարկեր/ՀՆԱ ճեղքը կարելի է դիտարկել միայն որպես վարկերի ավելցուկային աճի գնահատման նախնական ուղենիշ, որը, սակայն, բավարար չէ՝ որոշելու վարկային ցիկլի զարգացումները, մասնավորապես՝ վերջինիս փուլերի միջև առկա շրջման կետերը (վերելքի փուլ, վայրէջքի փուլ): Վերոնշյալով պայմանավորված՝ Բազելյան կոմիտեի կողմից առաջարկվում է, ի լրումն վարկեր/

ՀՆԱ ճեղքի, ԿՀԲ-ի վերաբերյալ որոշումներ կայացնելիս առաջնորդվել հայեցողականության սկզբունքով (discretion):

ՀՀ ԿԲ-ն նույնպես կիրառում է հայեցողականություն և ԿՀԲ-ի սահմանման վերաբերյալ որոշումները կայացնելիս վարկեր/ՀՆԱ ճեղքից ածանցված գնահատականներին զուգահեռ՝ նաև վարկերի ավելցուկային աճը և համակարգային ռիսկերի կուտակումը բնութագրող վաղ ահազանգման այլ ցուցանիշներ, վերլուծելով այդ ցուցանիշների, ինչպես նաև դրանց համախմբման արդյունքում ստացված ամփոփ տվյալների փոփոխություններ, ինչի արդյունքում կատարում է փորձագիտական դատողություններ: Մասնավորապես, վաղ ահազանգման ցուցանիշների թվին են դասվում վարկային շուկայի զարգացումները բնութագրող ցուցանիշները (վարկերի ծավալների փոփոխություն, վարկավորման աճի տեմպեր, տրենդերի վերլուծություն, վարկավորման պայմաններ և այլն), վարկային շուկայի զարգացումների հետ սերտորեն կապված անշարժ գույքի գները և հիպոթեքային վարկավորման միտումները, արտաքին անհավասարակշռությունը բնութագրող ցուցանիշները և այլն:


ՀՀ ԿԲ-ում ԿՀԲ-ի սահմանման վերաբերյալ որոշումների կայացումը (դրույքաչափի որոշում, բարձրացում, նվազեցում, անփոփոխ թողնելը) իրականացվում է համաձայն նկ. 2-ում նկարագրված հաջորդական քայլերի: Ըստ նկարագրված գործընթացի՝ սկզբնական փուլում (նկ. 2, վերին հատված) նախ անհրաժեշտ է որոշել, թե արդյո՞ք ԿՀԲ-ի փաստացի մակարդակը համապատասխանում է տնտեսության ընթացիկ զարգացումներին:

Այսինքն՝ ՀՀ ԿԲ-ը պետք է որոշում կայացնի ԿՀԲ-ի բարձրացման, նվազեցման կամ անփոփոխ թողնելու վերաբերյալ: Այս փուլում քանակական ցուցանիշների միջոցով (վարկ/ՀՆԱ ճեղք և այլն ցուցանիշներ) գնահատվում է վարկային շուկայի համընդհանուր զարգացումների արդյունքում համակարգային ռիսկերի առաջացման (կուտակման) հնարավորությունը: Այնուհետև, այս գնահատականները և դրանցից ածանցված որոշումները կարող են ճշգրտվել՝ հաշվի առնելով փորձագիտական դատողությունները և ԿԲ այլ գործիքների հնարավոր ազդեցությունները (որպես օրինակ կարող են հանդիսանալ վարկ/գրավ կամ պարտքի սպասարկում/եկամուտ հարաբերակցությունների առավելագույն սահմանաչափերի փոփոխության հնարավոր ազդեցությունները, որոնք կարող են մասամբ մեղմել ռիսկերի կուտակումը):

Կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանվում է եռամսյակային կտրվածքով, 0 տոկոսից (ներառյալ) մինչև 2.5 տոկոս (ներառյալ) միջակայքում, ընդ որում՝ նվազագույն քայլի մեծությունը կազմում է 0.25 տոկոս, և կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանվում է այդ նվազագույն քայլի բազմապատիկի չափով [6]:

Այն դեպքում, երբ ՀՀ ԿԲ-ը եզրահանգում է, որ ԿՀԲ-ի դրույքաչափի փոփոխման անհրաժեշտություն չկա, ապա դրանով գործընթացն ավարտվում է

(նկ. 2, վերին հատված): Այն դեպքում, երբ որոշվում է վերանայել ԿՀԲ-ի դրույքաչափի բարձրացման կամ նվազեցման գործընթացը, ապա այն շարունակվում է, և սկսվում են դրույքաչափի փոփոխության վերաբերյալ քննարկումները (նկ 2, միջին հատված): Մասնավորապես՝ ավելի մանրամասն գնահատվում են վարկերի ավելցուկային աճը նախանշող տարբեր քանակական ցուցանիշների աճի տեմպերը, վերջիններիս իրենց տրենդներից շեղումների չափը և շեղման տևողությունը, ծավալային փոփոխությունները և այլն:



Նկ. 2. Կարգավորողի կողմից ԿՀԲ-ի սահմանման վերաբերյալ որոշումների կայացման ՀՀ ԿԲ մոտեցումը [7]

Նախքան ԿՀԲ-ի դրույքաչափի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը՝ վերը թվարկված ամբողջ մուտքային տեղեկատվությունը նորից համադրվում է փորձագիտական դատողությունների հետ, և սահմանվում է դրույքաչափ (նկ.2, ստորին հատված):

Կապիտալի հակացիկլիկ շեմի վերաբերյալ որոշումը կայացնելիս ՀՀ կենտրոնական բանկն առաջնորդվել է հետևյալ փաստերի համապարփակ վերլուծությամբ.

2021թ. երկրորդ եռամսյակի դրությամբ մասնավոր հատվածին տրամադրված վարկեր/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 52.95% (ֆինանսական հատվածի կողմից տնտեսությանը տրամադրված վարկային պորտֆելի (ներառյալ լիզինգը և ֆակտորինգը) կշիռն է ՀՆԱ-ում %-ով): Այս ցուցանիշի համար հաշվարկված ճեղքվածքը (վարկեր/ՀՆԱ-ի տարբերությունը իր երկարաժամկետ տրենդից) կազմել է 5.24 տոկոսային կետ, որը, այլ հավասար պայմաններում, ենթադրում է ԿՀԲ

դրական դրույքաչափի կիրառում (Բազելյան կոմիտեի մեթոդաբանության համաձայն՝ դրական ԿՀԲ սահմանելու համար որպես մեկնակետ առաջարկվում է կիրառել վարկեր/ՀՆԱ ցուցանիշի 2 տոկոսային կետ ճեղքվածքը): Նախորդ եռամսյակի համեմատ վարկեր/ՀՆԱ ցուցանիշի առաջանցիկ աճը առավելապես պայմանավորվել է ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակում արձանագրված տնտեսական խոր անկմամբ: Սակայն հարկ է նշել, որ Կենտրոնական բանկը ԿՀԲ դրույքաչափը սահմանելիս հիմնվում է նաև վաղ ահազանգման այլ ցուցանիշների վրա, որոնց համապարփակ վերլուծության արդյունքում բացահայտվում և գնահատվում են վարկավորման շուկայի համընդհանուր օրինաչափությունները և տնտեսության դիրքը ֆինանսական ցիկլում [8]:

Ամփոփելով՝ նշենք, որ մակրոպրոլեցիալ գործիքների, մասնավորապես՝ ԿՀԲ-ի վերաբերյալ որոշումներ կայացնելիս ՀՀ ԿԲ-ն առաջնորդվում է ուղղորդված հայեցողականության սկզբունքով: Ուղղորդված հայեցողականության սկզբունքի կիրառումը պայմանավորված է նրանով, որ համակարգային ռիսկերի գնահատումը բարդ գործընթաց է, և բացառապես քանակական մեթոդների մեխանիկական կիրառմամբ արված եզրահանգումները կարող են բավարար (ճիշտ) չլինել:

Այդպիսով, ԿՀԲ-ի վերաբերյալ ՀՀ ԿԲ որոշումների կայացման գործընթացը պետք է հիմնվի ոչ միայն քանակական մեթոդներով ստացված գնահատականների, այլ նաև փորձագիտական դատողությունների վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. The evolution of the Basel Committee, Basel Committee on Banking Supervision: Challenges and opportunities Basel, 26 September 2013
2. **Jean-Paul Decamps, Jean-Charles Rochet, Benoît ROGER.** The Three Pillars of Basel II: Optimizing the Mix in a Continuous-time Model: Abstract, April 12, 2002, (Université de Toulouse and CEPR).
3. Basel III. Implementation. KPMG — http://www.kpmg.com/RU/ru/topics/Russian-Banking-Club/Documents/Basel%20III_rus.pdf
4. “Guidance for national authorities operating the countercyclical capital buffer” (BCBS); <http://www.bis.org/publ/bcbs187.pdf>
5. RECOMMENDATION OF THE EUROPEAN SYSTEMIC RISK BOARD, on intermediate objectives and instruments of macroprudential policy; http://www.esrb.europa.eu/pub/pdf/recommendations/2013/ESRB_2013_1.en.pdf
6. ՀՀ ԿԲ Խորհրդի 04.02.2019թ. Թիվ 16-Ն Որոշում - <https://www.cba.am/AM/laregulations/Capital%20buffers.pdf>
7. Կապիտալի հակացիկլիկ շեմի ՀՀ ԿԲ սահմանման մեթոդաբանություն՝ [Էլեկտրոնային ռեսուրս] - https://www.cba.am/am/SitePages/fsintroduction_def.aspx
8. ՀՀ ԿԲ, «Կապիտալի հակացիկլիկ շեմի սահմանման հիմքում ընկած ընդհանուր մեթոդաբանությունը» փաստաթուղթը, [Էլեկտրոնային ռեսուրս] <https://www.cba.am/Storage/AM/downloads/finstability/Capital.pdf>

Г.Н. АРЕВШАТЯН, И.А. ОВСЕПЯН

**ПОДХОДЫ К ОЦЕНКЕ КРЕДИТНЫХ РИСКОВ БАЗЕЛЬСКОГО
КОМИТЕТА ПО БАНКОВСКОМУ НАДЗОРУ**

Рассматриваются разработки международных подходов к оценке кредитных рисков Базельского комитета по банковскому надзору. Выявлены существующие проблемы кредитного риска и представлены перспективы их преодоления.

Определены текущее состояние и подходы Центрального банка РА в этих процессах.

Ключевые слова: кредитный риск, достаточность капитала, контрциклический порог капитала.

G.N. AREVSHATYAN, I.A. HOVSEPYAN

**APPROACHES OF THE BANKING CONTROL BASEL COMMITTEE TO
THE CREDIT RISK ASSESSMENT**

The developments of international credit risk assessment approaches of the Basel Committee on Banking Supervision are considered. The current problems of credit risk are identified and the prospects for overcoming them are presented.

The current situation in Armenia, and the approaches of the central bank in these processes are also determined.

Keywords: credit risk, capital adequacy, countercyclical capital threshold.

ՀՏԴ 339.13: 621.315.2

Ս.Մ. ԲԱԽՇՅԱՆ, Ս.Ա. ՄԿՐՏՉՅԱՆ, Ա.Ս. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

**ՊՂՆՁԻ ՀԵՆՔՈՎ ՄԱԼՈՒԽԻ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՅՈՒՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

Հայաստանն ունի բոլոր իրական նախադրյալները՝ պղնձի սեփական արտադրության պարագայում դառնալու մալուխի միջազգային շուկայում տարածաշրջանի հիմնական արտադրողն ու արտահանողը՝ իր միկրո և մակրո տնտեսական արդյունքներով: Հոդվածում վերլուծության են ենթարկվում հայրենական մալուխի շուկայի առկա իրավիճակը, ներկայումս հայաստանյան շուկայի խոշորագույն մալուխային ընկերության՝ «ԻՆ-ՎԻ» ՍՊԸ-ի արտադրատնտեսական գործունեությունը և շուկայի զարգացման հեռանկարները:

Առանցքային բաներ. պղնձի արտադրություն, մալուխի արտադրություն, արտահանման շուկաներ, կայուն զարգացում:

Ներկայումս Հայաստանը տիրապետում է պղնձի համաշխարհային պաշարների 1%-ին՝ 8 մլն տ [1], իսկ պղինձ արտադրող 56 երկրների ցանկում գրավում է 25-րդ տեղը՝ 83291 տոննա ցուցանիշով կամ 0,4% մասնաբաժնով [2]: Սա-